Գայանե ԹՈՎՄԱՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ կառավարում մասնագիտությամբ: 2014 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, 2021 թ.՝ դոցենտի գիտական կոչում:

2016 թ.-ից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակից է:

2016 թ.-ից դասավանդում է ՀՀ ՊԿԱ-ում, 2019 թ.-ից՝ ՀՊՏՀ-ում, 2023 թ.-ից՝ Երևանի պետական համալսարանում և Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում:

130-ից ավելի գիտական հրապարակումների, այդ թվում՝ ինը մենագրության և երեք ուսումնական ձեռնարկի հեղինակ է և համահեղինակ, մեկ բուհական դասագրքի հեղինակ: Հոդվածներից 15-ը տպագրվել են Scopus և Web of Science շտեմարաններում ընդգրկված ամսագրերում:

https://orcid.org/0000-0002-4131-6322

Web of Science ResearcherID: AAH-5677-2021
Scopus Author ID: 56690085600

ԳՈԼԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՂԹԱԿԱՆ ԳԱՎԱԹ.

ՍՊՈՐՏԻ ԱՐՔԱ ՖՈՒՏԲՈԼԸ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ

DOI: 10.52174/2579-2989_2024.4-34

Հիմնաբառեր. *սպորտ, ֆուտբոլ, ֆուտբոլային զբոսաշրջություն, գոլ, մարզադաշտ, մրցաշար, գավաթ*

Ֆուտբոլը համարվում է սպորտի արքա և ունի մոտ 3,5 միլիարդ երկրպագու ամբողջ աշխարհում և 250 միլիոն խաղացող՝ աշխարհի 200 երկրներում: Համաշխարհային ֆուտբոլի շուկայի չափը գնահատվել է 3,75 միլիարդ ԱՄՆ դոլար 2022 թվականին և կանխատեսվում է, որ կհասնի 5,24 միլիարդ ԱՄՆ դոլարի մինչև 2031 թվականը: Ֆուտբոլի պատմության մեջ ամենաշատ թվով գոլեր խփել են պորտուգալացի Քրիշտիանու Ռոնալդուն՝ 879 գոլ և արգենտինացի Լեոնել Մեսսին՝ 832 գոլ:

Հոդվածում ներկայացվել են միլիոնավոր զբոսաշրջիկների գրավող հիմնական ֆուտբոլային իրադարձությունները՝ ՖԻՖԱ-ի աշխարհի գավաթ, ֆուտբոլի Եվրոպայի առաջնություն, ՈՒԵՖԱ-ի չեմպիոնների լիգա, Եվրոպայի հինգ գլխավոր լիգաներ և այլն: Անդրադարձ է կատարվել նաև աշխարհի լավագույն մարզադաշտերին, որոնք ընդունում են միլիոնավոր զբոսաշրջիկների: Կատարվել են որոշ առաջարկություններ Հայաստանում ֆուտբոլի և ֆուտբոլային զբոսաշրջության զարգացման ուղղությամբ:

Սպորտը և զբոսաշրջությունը փոխկապակցված են և փոխլրացնող: Այսօր սպորտային զբոսաշրջությունը ոլորտում ամենաարագ զարգացողներից մեկն է: Սպորտային զբոսաշրջությունը ենթադրում է ճանապարհորդություն սպորտային իրադարձություններին մասնակցելու կամ, որպես հանդիսատես, ներկա լինելու նպատակով[1]:

Սպորտային զբոսաշրջությունը կազմում է զբոսա-

[1] Թովմասյան Գ., Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (մենագրություն), Երևան: «Մեկնարկ» ՍՊԸ, 2020, էջ 201:

շրջության վրա կատարված համաշխարհային ծախսերի մոտ 10%-ը:

Ավելի ու ավելի շատ զբոսաշրջիկներ ուղևորությունների ընթացքում հետաքրքրվում են սպորտային իրադարձություններով՝ անկախ նրանից, թե սպորտը ճամփորդության հիմնական նպատակն է, թե ոչ: Սպորտային մեգահիրադարձությունները, ինչպիսիք են Օլիմպիական խաղերը և Աշխարհի գավաթները, կարող են զբոսաշրջության զարգացման շարժիչ ուժ լինել, եթե հաջողությամբ կիրառվեն դեստինացիաների բրենդինգի, ենթակառուցվածքների զարգացման և այլ տնտեսական ու սոցիալական օգուտների առումով[2]:

Սպորտային զբոսաշրջության շուկայի չափը 2023 թվականին գնահատվել է 564,7 միլիարդ ԱՄՆ դոլար, և կանխատեսվում է, որ 2024-ից մինչև 2032 թվականները կգրանցվի ավելի քան 10% տարեկան աճ[3]:

Սպորտային զբոսաշրջության մեջ իր ուրույն տեղն ունի ***ֆուտբոլային զբոսաշրջությունը***:

Համաշխարհային ֆուտբոլի շուկայի չափը գնահատվել է 3,75 միլիարդ ԱՄՆ դոլար՝ 2022 թվականին, և կանխատեսվում է, որ դա կհասնի 5,24 միլիարդ ԱՄՆ դոլարի մինչև 2031 թվականը[4]:

Ֆուտբոլը համարվում է սպորտի արքա գրեթե ողջ Եվրոպայում, Հարավային Ամերիկայում, Աֆրիկայում, Մերձավոր Արևելքում, Կենտրոնական Ամերիկայում և Ասիայում: Այս մարզաձևն ունի մոտ 3,5 միլիարդ երկրպագու ամբողջ աշխարհում և 250 միլիոն խաղացող՝ աշխարհի 200 երկրներում: Աշխարհի հաջորդ ամենահայտնի մարզաձևերն են կրիկետը (2,5 միլիարդ երկրպագու) և բասկետբոլը (2,2 միլիարդ երկրպագու)[5]:

Այժմ անդրադառնանք այն հիմնական ֆուտբոլային իրադարձություններին, որոնք գրավում են միլիոնավոր զբոսաշրջիկների ուշադրությունը:

Միջազգային ֆուտբոլի ամենահեղինակավոր մրցաշարը՝ *ՖԻՖԱ-ի աշխարհի կողամարդկանց գավաթը (FIFA World Cup)*, որոշում է ֆուտբոլի աշխարհի չեմպիոնին: Սա ամենահայտնի մարզական իրադարձություններից մեկն է, և դրա յուրաքանչյուր մրցաշար գրավում է միլիարդավոր հեռուստադիտողների: Գավաթի համար առաջին մրցաշարը կազմակերպվել է 1930 թվականին՝ Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի (FIFA) կողմից, որտեղ հաղթել է Ուրուգվայի թիմը: Այդ ժամանակից ի վեր մրցաշարն անցկացվում է չորս տարին մեկ անգամ, բացառությամբ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիների:

1930-1970-ական թվականներին շնորհված գավաթը կրել է մրցաշարի նախաձեռնող, ֆրանսիացի Ժյուլ Ռիմեի անունը: Այս գավաթը 1970 թ. մշտական հիմունքներով շնորհվել է այն ժամանակվա եռակի հաղթող Բրազիլիային (1958, 1962 և 1970 թթ.), որից հետո շրջանառության մեջ է դրվել նոր գավաթ, որը կոչվում է ՖԻՖԱ-ի աշխարհի գավաթ: Պատմության մեջ այդ գավաթն ամենաշատը բաժին է հասել Բրազիլիային՝ հինգ, իսկ Գերմանիային և Իտալիային՝ չորս անգամ: 2022 թ. հաղթել է Արգենտինան՝ երրորդ անգամ[6]:

2022 թ. ՖԻՖԱ-ի աշխարհի գավաթն

[2] Sports tourism, https://www.unwto.org/sport-tourism
[3] Sports Tourism Market, https://www.gminsights.com/industry-analysis/sports-tourism-market
[4] Global Football Market Size, Share, Growth Analysis, By Type (Training ball, Match ball), By Distribution channel (Online, Offline), By Size (Size 1, Size 2) - Industry Forecast 2024-2031, https://www.skyquestt.com/report/football-market
[5] Most popular sport by country 2024, https://worldpopulationreview.com/country-rankings/most-popular-sport-by-country
[6] World Cup football tournament, https://www.britannica.com/sports/World-Cup-football

անցկացվել է Կատարում: Այդ միջոցառմանն ընդառաջ՝ ձեռնարկվել է մեկ տասնամյակ տևող մեծ ներդրումային ծրագիր՝ 200–300 միլիարդ ԱՄՆ դոլարի չափով, որի շնորհիվ՝ վերափոխվել է քաղաքային լանդշաֆտը: Ենթակառուցվածքի ծախսերի մեծ մասը հատկացվել է հյուրանոցների, ստորգետնյա տրանսպորտի, մարզադաշտերի, երկաթուղու, նավահանգստի և օդանավակայանների հետ կապված նորարարական հանգույց կառուցելու ազգային ծրագրին: Մարզադաշտերի շինարարությունն արժեցել է 6,5 միլիարդ ԱՄՆ դոլար, որն ընդհանուր ներդրումների մի փոքր մասն է:

Մրցաշարի ընթացքում Կատար է ժամանել շուրջ 1 միլիոն այցելու, որից 0,3 միլիոնը մնացել է հարևան երկրներում՝ օգտվելով չարտերային թռիչքներից՝ Կատար մեկնելու համար:

ԱՄԷ-ն (հիմնականում՝ Դուբայը) գրավել է ընդհանուր այցելուների մոտ 80 տոկոսին: Խաղերի համար Կատարում գտնըվող այցելուներն այցելել են նաև տարածաշրջանի այլ երկրներ: Որպես այդպիսին, աշխարհի գավաթը խթանել է զբոսաշրջությունը ոչ միայն Կատարում, այլև հարևան երկրներում:

Այցելուների զբոսաշրջային ծախսերը և աշխարհի գավաթի հետ կապված հեռարձակման եկամուտը գնահատվում են 2,3–4,1 միլիարդ ԱՄՆ դոլար: Համախառն ավելացված արժեքով դրանք կազմել են 1,6–2,4 միլիարդ ԱՄՆ դոլար կամ Կատարի 2022 թվականի ՀՆԱ 0,7–1,0 տոկոսը[7]:

2026 թվականին ՖԻՖԱ-ի աշխարհի գավաթը կանցկացվի Կանադայում, Մեքսիկայում և ԱՄՆ-ում:

Եվ մեկ ուշագրավ մանրամասն. ՖԻՖԱ-ի աշխարհի գավաթի պատմության մեջ ամենաշատ գոլերը խփել են գերմանացի Միրոսլավ Քլոզեն՝ 16 գոլ և բրազիլացի Ռոնալդոն՝ 15 գոլ[8]:

Ֆուտբոլի Եվրոպայի առաջնությունը (UEFA European Championship) չորս տարին մեկ անցկացվող մրցաշար է, որը տեղի է ունենում Եվրոպական ֆուտբոլային ասոցիացիաների միության (ՈՒԵՖԱ) անդամ երկրների միջև: Սա իր հեղինակությամբ աշխարհի առաջնությունից հետո երկրորդն է ֆուտբոլի միջազգային մրցաշարերի մեջ:

Եվրոպայի առաջնության առաջին եզրափակիչը (այն ժամանակ հայտնի էր որպես Եվրոպայի ազգերի գավաթ) տեղի է ունեցել 1960 թ.՝ 17 ազգային ֆուտբոլային ակումբների միջև երկու տարվա նախնական մրցումներից հետո: Դրան մասնակցել է չորս թիմ: Սակայն, 1980 թվականին այս կազմն ընդլայնվել է մինչև 8 թիմ: 1996 թվականից ի վեր մասնակիցների թիվը դարձել է 16 թիմ: Ներկայումս Եվրոպայի առաջնության որակավորումը մեկնարկում է նախատեսված եզրափակչից երկու տարի առաջ, երբ ՈՒԵՖԱ-ի բոլոր անդամ երկրները սկսում են խաղալ միմյանց միջև՝ 16 թիմերի եզրափակիչ մրցաշարում տեղ վաստակելու համար (որակավորման գործընթացը չի ներառում ընդունող երկիրը կամ երկրները, որոնք ավտոմատ կերպով իրավունք են ստանում եզրափակչին մասնակցելու համար)[9]:

Եվրոպայի ֆուտբոլի 2020 թ. առաջնությունը, որը հետաձգվել էր COVID-19 համավարակի պատճառով, անցկացվեց 2021 թ.-ին՝ հետևյալ քաղաքներում՝ Ամստերդամ, Բաքու, Բուխարեստ, Բուդապեշտ, Կոպենհագեն, Գլազգո, Լոնդոն, Մյունխեն, Հռոմ, Սանկտ Պետերբուրգ,

[7] 2022 FIFA World Cup: Economic Impact on Qatar and Regional Spillovers, IMF report 2024, 13p., https://www.imf.org/-/media/Files/Publications/Selected-Issues-Papers/2024/English/SIPEA2024011.ashx
[8] FIFA World Cup all-time leading scorers, https://www.fifa.com/fifaplus/en/tournaments/mens/worldcup/articles/fifa-world-cup-all-time-leading-scorers
[9] European Championship football tournament, https://www.britannica.com/sports/European-Championship

Սևիլիա[10]: Եվրո 2020-ի եկամուտը կազմել է մոտ 1,9 միլիարդ եվրո[11]: Եզրափակիչն ուղիղ եթերում դիտել է 328 մլն մարդ, իսկ բոլոր խաղերին ուղիղ եթերով հետևողների ընդհանուր թվաքանակը կազմել է 5,2 մլրդ մարդ[12]:

Եվրո 2024-ն անցկացվեց Գերմանիայում՝ հունիսի 14-ից մինչև հուլիսի 14-ը, իսկ գավաթը չորրորդ անգամ նվաճեց Իսպանիան: Մոտ 2.67 միլիոն երկրպագու է հաճախել 10 մարզադաշտերում անցկացվող 51 խաղերին, բացի այդ, միլիոնավոր մարդիկ խաղերին հետևել են հեռուստացույցով և սոցիալական ցանցերով[13]: Ըստ մոտավոր հաշվարկների՝ Եվրո 2024-ի եկամուտը կազմել է 2.5 միլիարդ եվրո (խաղերի հեռարձակումից, հովանավորների գործարքներից, տոմսերի վաճառքից, հյուրընկալության փաթեթներից և այլն)[14]:

Եվրոպայի ֆուտբոլի առաջնության պատմության մեջ եզրափակիչ մրցաշարում ամենաշատ գոլ խփել է պորտուգալացի Քրիշտիանու Ռոնալդուն՝ 14 գոլ, ապա ֆրանսիացի Միշել Պլատինին՝ 9 գոլ[15]:

ՈՒԵՖԱ չեմպիոնների լիգան (UEFA Champions League) ֆուտբոլի ակումբային ամենամյա առաջնություն է, որն անցկացվում է Եվրոպայում՝ 1992 թվականից սկսած: Դա փոխարինել է Եվրոպական չեմպիոնների գավաթին, որն անցկացվել է 1955-1992 թթ.:

Առաջնության հաղթող է դարձել 22 ակումբ, ամենաշատ՝ 15 հաղթանակ է գրանցել Մադրիդի «Ռեալը»: Ամենաշատ գոլերը խփել են Քրիշտիանու Ռոնալդուն (141), Լեոնել Մեսսին (129), Ռոբերտ Լևանդովսկին (91), Կարիմ Բենզեման (90) և Ռաուլ Գոնսալեսը (71)[16]:

ՈՒԵՖԱ-ի չեմպիոնների լիգայի 2023/2024 մրցաշրջանի եզրափակիչը կայացավ Լոնդոնի պատմական «Ուեմբլի» մարզադաշտում,[17] որտեղ Մադրիդի «Ռեալը» 15-րդ անգամ նվաճեց գավաթը:

Վերոնշյալներից բացի, ֆուտբոլի միջազգային խոշոր մրցաշարերից են նաև.

- ***Copa America-ն***, որին մասնակցում են Հարավային Ամերիկայի 10 ուժեղագույն ազգային թիմեր: Մրցաշարը հիմնադրվել է 1916 թվականին՝ որպես Արգենտինայի հարյուրամյակի տոնակատարություն: Սկզբնական շրջանում անցկացվել է ամենամյա, իսկ 1927 թ.-ից հետո՝ անկանոն պարբերականությամբ: Դա Ամերիկայի և աշխարհի ամենահին մրցույթն է:
- ***Աֆրիկայի ազգերի գավաթը*** (Africa Cup of Nations) միջմայրցամաքային ֆուտբոլային մրցաշար է, որը նախաձեռնել է Աֆրիկյան ֆուտբոլի կոնֆեդերացիան: Դրա մենարկը տրվել է 1957 թվականին՝ Եգիպտոսի, Սուդանի և Եթովպիայի թիմերի մասնակցությամբ:

  1968 թվականին Աֆրիկայի ֆուտբոլի կոնֆեդերացիան ընդունել է որոշում առաջնությունը երկու տարին մեկ անգամ անցկացնելու վերաբերյալ, իսկ մասնակից թիմերի թիվն ավելացել է՝ պայմանավորված Աֆրիկայի աստիճանական ազատագրմամբ (1998 թվականից սկսած՝ մինչև 16, 2019-ից հետո՝ 24 թիմ): Ընդ որում, յուրաքանչյուր թիմ, բացի հյուրընկալողից, պետք է մասնակցի Աֆրիկյան ֆուտբոլի կոնֆեդե-

[10] EURO 2020: host cities and stadiums, https://www.uefa.com/uefaeuro/history/news/0256-0dd74d2cf7cc-56813840afe0-1000--euro-2020-host-cities-and-stadiums/

[11] Total revenue of the UEFA European Championship from 1992 to 2021(in million euros), https://www.statista.com/statistics/279103/uefa-euro-revenue/

[12] UEFA EURO 2020 impresses with 5.2 billion cumulative global live audience, https://www.uefa.com/news-media/news/026d-132519672495-56a014558e80-1000--uefa-euro-2020-impresses-with-5-2-billion-cumulative-globa/

[13] Euro 2024 in numbers: Attendance records, viewership peaks and a boost in alcohol-free beer sales, https://www.sportspromedia.com/insights/analysis/euro-2024-stats-tv-ratings-viewership-attendance-social-media-sales/

[14] Euro 2024 in Germany is UEFA's 1st step to raise pandemic-hit cash reserves above $550 million, https://apnews.com/article/euros-2024-uefa-finances-34e805f6a72adf70846aa65ca9a2f251

[15] EURO top scorers: all time and for every tournament, https://fr.uefa.com/euro2024/news/0259-0e6c1891bd10-d54f17cfd501-1000--euro-top-scorers-all-time-and-for-every-tournament/

[16] UEFA CHAMPIONS LEAGUE STATISTICS HANDBOOK 2022/23, https://editorial.uefa.com/resources/0282-18407aecf6fe-cb-82de053b1e-1000/ucl_202223_all-time_md13.pdf

[17] 2024 UEFA Champions League final: Wembley Stadium, https://www.uefa.com/uefachampionsleague/news/0278-15c59d-96fb8d-876986ad6544-1000--where-is-the-2024-final/

ռացիայի կողմից կազմակերպվող որակավորման մրցաշարին:

- ***Ասիական ֆուտբոլի կոնֆեդերացիան***, 1956 թ.-ից սկսած, չորս տարին մեկ անգամ անցկացնում է Ասիայի գավաթը (Asian Nations Cup)՝ որոշելով Ասիայի չեմպիոնին:
- ***Հյուսիսային Ամերիկայի*** և ***Կարիբյան ավազանի ֆուտբոլի ֆեդերացիան*** երկու տարին մեկ անգամ անցկացնում է Ոսկե գավաթը (The CONCACAF Gold Cup), որը տարածաշրջանում ամենաբարձր վարկանիշ ունեցող ազգային թիմային մրցաշարն է: Դա առաջին անգամ անցկացվել է ԱՄՆ-ում՝ 1991 թվականին:

Իսպանական ֆուտբոլային լիգան (La Liga) հիմնադրվել է 1928 թ. և ամենամրցունակ առաջնությունն է եվրոպական բոլոր լիգաների մեջ: Հայտնի է նաև որպես «Աստղային լիգա»: Երկար տարիներ Լա Լիգան գլխավորում է ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի վարկանշային աղյուսակները: Ամենաշատ թվով հաղթանակներ ունի Մադրիդի «Ռեալը»: 2022/2023 թթ. մրցաշարին 11 մլն հանդիսատես է հետևել մարզադաշտերում[18]:

- ***Պրեմիեր լիգան*** (Premier League) ամենաբարձր մակարդակի և ամենաշատ եկամուտ ապահովող պրոֆեսիոնալ ֆուտբոլային լիգան է Անգլիայի ֆուտբոլային ասոցիացիայի կազմում: Հայտնի է որպես «Եվրոպայի հինգ գլխավոր լիգաներից» մեկը: Բաղկացած է 20 թիմից: Ամենաշատ հաղթանակներ գրանցել է «Մանչեսթեր Յունայթեդը»:
- ***Ա Սերիան*** (Serie A) Իտալիայի ամենաբարձր մակարդակի պրոֆեսիոնալ ֆուտբոլային լիգան է՝ Եվրոպայի լավագույն հինգ լիգաներից մեկը: Դա առաջին անգամ անցկացվել է 1898 թ: Հաղթանակի ամենամեծ չափաբաժինը պատկանում է «Յուվենտուս» ակումբին[19]:
- Եվրոպայի հինգ լավագույն լիգաների մեջ են մտնում նաև ***Բունդեսլիգան*** (Bundesliga) և ***Լիգա 1-ը*** (Ligue 1)՝ ***Գերմանիայի և Ֆրանսիայի ֆուտբոլային լիգաները***: Բունդեսլիգան հիմնադրվել է 1963 թ.-ին, որտեղ գրանցված ամենաշատ հաղթանակները Մյունխենի «Բավարիայինն» են: Լիգա 1-ը հիմնադրվել է 1930 թ.-ին, իսկ ամենաշատ հաղթանակները «Պարի Սեն-Ժերմենինն» են:

Ֆուտբոլի պատմության մեջ ամենագոլառատ ֆուտբոլիստը պորտուգալացի Քրիշտիանու Ռոնալդուն է՝ 879 գոլ: Նրան հաջորդում են արգենտինացի Լեոնել Մեսսին՝ 832 գոլ, բրազիլացի Պելեն և Ռոմարիոն, համապատասխանաբար՝ 762 և 755 գոլ[20]:

Աշխարհի ամենաթանկարժեք ֆուտբոլային ակումբների ցանկը 2024 թ. գլխավորում է Մադրիդի «Ռեալը», որի արժեքը գնահատվում է 6,07 մլրդ ԱՄՆ դոլար, որին հաջորդում են «Մանչեսթեր Յունայթեդը»՝ 6 մլրդ ԱՄՆ դոլար, «Բարսելոնան»՝ 5,51 մլրդ ԱՄՆ դոլար[21]:

Ֆուտբոլի սիրահարները, խաղերից բացի, այցելում են իրենց սիրելի ակումբների մարզադաշտեր, որոնք դարձել են զբոսաշրջային գրավիչ դեստինացիաներ: Այս վայրեր այցելելու նպատակով մշակվում են հատուկ տուրեր՝ ապահովելով լրացուցիչ եկամուտ:

GIVEMESPORT-ը առանձնացրել է համաշխարհային ֆուտբոլի լավագույն 20 մարզադաշտերը և դրանք դասակարգել ըստ հերթականության: Վարկանշային գործոններն են՝

- տարողությունը. հանդիսատեսի այն քանակը, որ կարող է դիտել խաղը մարզադաշտում,
- որքան գրավիչ տեսք ունի մարզադաշտը. հստակ և եզակի առանձնահատ-

[18] La Liga: annual attendance to stadiums 2009/2010-2022/2023, https://www.statista.com/statistics/783169/la-liga-annual-football-attendance-figures-in-spain/
[19] Top 13 Biggest Soccer Tournaments In The World (Ranked), https://winussportsco.com/biggest-soccer-tournaments-in-the-world/
[20] Top 11 Goalscorers in Football History (Ranked), https://www.givemesport.com/top-football-soccer-goalscorers-of-all-time/
[21] Top 10 Most Valuable Soccer Teams in the World 2024, https://www.jagranjosh.com/general-knowledge/list-of-most-valuable-soccer-teams-in-the-world-1707219146-1

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Աշխարհի 20 լավագույն մարզադաշտերը[22]

Դիրքը	Մարզադաշտ	Ակումբ	Տարողություն	Կառուցման տարին
1	Սանտյագո Բեռնաբեու (Santiago Bernabeu)	Մադրիդի «Ռեալ»	81044	1947
2	Տոտենհեմի Հոթսպուր մարզադաշտ (Tottenham Hotspur Stadium)	«Տոտենհեմ Հոթսպուր»	62850	2019
3	Ուեմբլի մարզադաշտ (Wembley Stadium)	Անգլիա	90000	2007
4	Սիգնալ Իդունա պարկ (Signal Iduna Park)	Դորտմունդի «Բորուսիա»	81365	1974
5	Ալիանս Արենա (Allianz Arena)	Մյունխենի «Բավարիա»	75024	2005
6	Ացտեկա մարզադաշտ (Estadio Azteca)	«Ամերիկա», Մեքսիկա	105000	1966
7	Օլդ Թրաֆորդ (Old Trafford)	«Մանչեսթեր Յունայթեդ»	74879	1910
9	Մարականա (Maracana)	«Ֆլումինեսե», «Ֆլամենգո», Բրազիլիա	78838	1950
9	Սան Սիրո (San Siro)	«Միլան», «Ինտեր»	75923	1926
10	Լա Բոմբոներա (La Bombonera)	«Բոկա Խունիորս»	57200	1938
11	Անֆիլդ (Anfield)	«Լիվերպուլ»	61276	1884
12	Սոկեր սիթի (Soccer City)	«Կայզեր Չիֆս», Հարավային Աֆրիկա	94700	1989
13	Կամպ Նոու (Camp Nou)	«Բարսելոնա»	99354	1957
14	Սելթիկ Պարկ (Celtic Park)	«Սելթիկ»	60832	1888
15	Վանդա Մետրոպոլիտանո (Wanda Metropolitano)	Մադրիդի «Ատլետիկո»	70460	2017
16	Շտադե Վելոդրոմ (Stade Velodrome)	«Մարսել»	67394	1937
17	Մեստալա մարզադաշտ (Mestalla Stadium)	«Վալենսիա»	49430	1919
18	Էստադիո դա Լուզ (Estadio da Luz)	«Բենֆիկա»	64642	2003
19	Իբրոքս մարզադաշտ (Ibrox Stadium)	«Ռենջերս»	50987	1899
20	Ազադի մարզադաշտ (Azadi Stadium)	«Էստեգլալ», «Պերսեպոլիս», Իրան	78116	1971

կությունները,

- որքան խորհրդանշական է մարզադաշտը՝ որպես հայտնի հանդիպումների վայր, և որ հռչակավոր մարզիկներն են պարբերաբար խաղացել այդ մարզադաշտում,
- երկրպագուների կողմից ստեղծվող մթնոլորտը:

Ըստ այս չափանիշների՝ լավագույն մարզադաշտերի ցանկն արտացոլված է աղյուսակ 1-ում:

«Սանտյագո Բեռնաբեու» մարզադաշտը Մադրիդի հիմնական տեսարժան վայրերից է: Տարեկան այստեղ է այցելում մոտ մեկ միլիոն մարդ: Տուրի արժեքը 25 եվրո է, որը ներառում է մուտք «Ռեալ» ֆուտբոլային ակումբի թանգարան, և տեսարանը մարզադաշտի ներսից[23]:

Ֆուտբոլի զբոսաշրջության հիմնական դեստինացիաներ են Լոնդոնը, Մադրիդը, Բուենոս Այրեսը, Ռիո դե Ժանեյրոն, Սան Պաուլոն, Միլանը, Լիվերպուլը, Մանչեսթե-

[22] Ranking the 20 Best Stadiums in World Football (2024), https://www.givemesport.com/best-football-soccer-stadiums-ranked/
[23] Classic TOUR BERNABÉU, https://www.realmadrid.com/sites/en/tour-bernabeu/classic

ը, Բարսելոնան, Մյունխենը, Հռոմը, Թուրինը և այլն[24]:

Մադրիդի «Ռեալի» հետևորդների թիվը սոցիալական մեդիայում 360 մլն մարդ է, «Բարսելոնայինը»՝ 318 մլն, «Մանչեսթեր Յունայթեդինը»՝ 207 մլն, «Պարի Սոն-Ժերմենինը»՝ 163 մլն, «Յուվենթուսինը»՝ 147 մլն[25]:

Այսպիսով՝ ֆուտբոլային զբոսաշրջությունը, որպես սպորտային զբոսաշրջության ամենամեծ բաժիններից մեկը, զարգացման լուրջ հեռանկարներ ունի:

Ֆուտբոլային զբոսաշրջությունն էական նշանակություն ունի դեստինացիաների զարգացման առումով՝ խթանելով համապատասխան ենթակառուցվածքների բարելավումը, ապահովելով էական տնտեսական օգուտներ, նպաստելով դեստինացիայի հեղինակության բարձրացմանն ու մարքեթինգային առաջմղմանը և այլն:

Ֆուտբոլը՝ Հայաստանում

Հայկական ֆուտբոլը մեծ նվաճումներ է արձանագրել Խորհրդային Միության տարիներին: 1971 թվականին ԽՍՀՄ բարձրագույն խմբի առաջնությունում Երևանի «Արարատ» ակումբն առաջին անգամ դարձել է արծաթե մրցանակակիր, իսկ 1973 թ.՝ ԽՍՀՄ չեմպիոն և գավաթակիր, 1975 թ.՝ կրկին ԽՍՀՄ գավաթակիր: 1992 թ. հիմնադրվել է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան[26], որն անդամակցել է ՖԻՖԱ-ին և ՈՒԵՖԱ-ին: 1992 թվականից սկսած՝ անցկացվում է Հայաստանի Հանրապետության առաջնությունը: 1992 թ. ստեղծվել է ֆուտբոլի ազգային հավաքականը, որը մասնակցում է աշխարհի և Եվրոպայի

առաջնությունների ընտրական փուլերի մրցաշարերին: 1994 թվականից առայսօր Հայաստանի ակումբային թիմերը մասնակցում են Եվրոպայի գավաթների խաղարկություններին: Ներկայիս մի շարք հայ ֆուտբոլիստներ ընդգրկված են տարբեր երկրների ակումբային թիմերում: Ցավոք, մեր ազգային հավաքականը, ինչպես նաև ակումբները միջազգային մակարդակով շատ մրցունակ չեն և զիջում են աշխարհի առաջատարներին:

Ֆուտբոլի զարգացումը Հայաստանում պահանջում է մի շարք քայլերի իրականացում.

- Պետական մակարդակով ֆուտբոլի երկարաժամկետ զարգացման ռազմավարական ծրագրի մշակում և իրականացում:
- Մարզերում ֆուտբոլի զարգացման նպատակով յուրաքանչյուր մարզում ֆուտբոլային մարզային ակումբների ստեղծում, որը պետք է իրագործվի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և մարզպետարանների միջոցով՝ պետական օժանդակությամբ:
- Յուրաքանչյուր մարզում ֆուտբոլի դրպրոցների ստեղծում, որտեղ մինչև 14 տարեկան երեխաները հնարավորություն կունենան անվճար սովորելու արհեստավարժ ֆուտբոլ խաղալու հմտությունները: Լավագույն խաղացողները հետագայում կընդգրկվեն մարզային ակումբներում և ազգային հավաքականում:
- Ֆուտբոլային ենթակառուցվածքների բարելավում ողջ երկրում՝ մարզադաշտերի և մարզահրապարակների կառուցման և վերանորոգման միջոցով:
- Բարձրորակ մարզիչների ներգրավում, որոնք կունենան միջազգային փորձ և հաջողություններ:
- Համագործակցություն միջազգային ֆուտբոլային կազմակերպությունների, ակումբների և ֆեդերացիաների հետ՝ գիտելիքի, ռեսուրսների և լավագույն փորձի փոխանակման նպատակով,

[24] The best cities for watching football, https://www.fourfourtwo.com/features/the-best-cities-for-watching-football
[25] The Top 10 Most Supported Football Clubs In The World, https://jobsinfootball.com/blog/most-supported-football-clubs-in-the-world/
[26] Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա, https://www.ffa.am/hy/home

որը հնարավորություն կտա մեր ֆուտբոլիստներին փորձի փոխանակման նպատակով վերապատրաստվելու այլ երկրներում:

- Հայաստանում ֆուտբոլի հանրաճանաչության մեծացում՝ մարքեթինգային արշավների, լրատվամիջոցների լուսաբանման և երկրպագուների ներգրավման նախաձեռնությունների միջոցով:

Այս ամենի արդյունքում կզարգանա ֆուտբոլը, որը կնպաստի նաև ֆուտբոլային ներքին և ներգնա զբոսաշրջության զարգացմանը: Օրինակ՝ ՀՀ բնակչության մեծ մասը չի եղել Արագածոտնի մարզի Թալին քաղաքում: Իսկ եթե ՀՀ ողջ տարածքում զարգանան մարզային ակումբները, կազմակերպվեն խաղեր մարզերի ֆուտբոլային մարզադաշտերում (օրինակ՝ Թալինում), ապա դրա արդյունքում ծաղկում կապրի ֆուտբոլային ներքին զբոսաշրջությունը՝ նպաստելով նաև զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացմանը:

Այս ամենը պետք է իրագործվի պետական նախաձեռնությամբ և հսկողությամբ՝ միաժամանակ խթաններ ստեղծելով նաև մասնավոր հատվածի ներգրավման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թովմասյան Գ., Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (մենագրություն). Երևան: Մեկնարկ ՍՊԸ, 2020, էջ 201:
2. Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա, https://www.ffa.am/hy/home
3. Classic TOUR BERNABÉU, https://www.realmadrid.com/sites/en/tour-bernabeu/classic
4. European Championship football tournament, https://www.britannica.com/sports/European-Championship
5. EURO 2020: host cities and stadiums, https://www.uefa.com/uefaeuro/history/news/0256-0dd74d2cf7cc-56813840afe0-1000--euro-2020-host-cities-and-stadiums/
6. Euro 2024 in Germany is UEFA's 1st step to raise pandemic-hit cash reserves above $550 million, https://apnews.com/article/euros-2024-uefa-finances-34e805f6a72adf70846aa65ca9a2f251
7. Euro 2024 in numbers: Attendance records, viewership peaks and a boost in alcohol-free beer sales, https://www.sportspromedia.com/insights/analysis/euro-2024-stats-tv-ratings-viewership-attendance-social-media-sales/
8. EURO top scorers: all time and for every tournament, https://fr.uefa.com/euro2024/news/0259-0e6c1891bd10-d54f17cfd501-1000--euro-top-scorers-all-time-and-for-every-tournament/
9. FIFA World Cup all-time leading scorers, https://www.fifa.com/fifaplus/en/tournaments/mens/worldcup/articles/fifa-world-cup-all-time-leading-scorers
10. Global Football Market Size, Share, Growth Analysis, By Type(Training ball, Match ball), By Distribution channel(Online, Offline), By Size(Size 1, Size 2) - Industry Forecast 2024-2031, https://www.skyquestt.com/report/football-market
11. La Liga: annual attendance to stadiums 2009/2010-2022/2023, https://www.statista.com/statistics/783169/la-liga-annual-football-attendance-figures-in-spain/
12. Most popular sport by country 2024, https://worldpopulationreview.com/country-rankings/most-popular-sport-by-country
13. Ranking the 20 Best Stadiums in World Football (2024), https://www.givemesport.com/best-football-soccer-stadiums-ranked/
14. Sports tourism, https://www.unwto.org/sport-tourism
15. Sports Tourism Market, https://www.gminsights.com/industry-analysis/sports-tourism-market
16. The best cities for watching football, https://www.fourfourtwo.com/features/the-best-cities-for-watching-football
17. The Top 10 Most Supported Football Clubs In The World, https://jobsinfootball.com/blog/most-supported-football-clubs-in-the-world/
18. Top 13 Biggest Soccer Tournaments In The World (Ranked), https://winussportsco.com/biggest-soccer-tournaments-in-the-world/
19. Top 11 Goalscorers in Football History (Ranked), https://www.givemesport.com/top-football-soccer-goalscorers-of-all-time/
20. Top 10 Most Valuable Soccer Teams in the World 2024,

https://www.jagranjosh.com/general-knowledge/list-of-most-valuable-soccer-teams-in-the-world-1707219146-1

21. Total revenue of the UEFA European Championship from 1992 to 2021(in million euros), https://www.statista.com/statistics/279103/uefa-euro-revenue/
22. UEFA EURO 2020 impresses with 5.2 billion cumulative global live audience, https://www.uefa.com/news-media/news/026d-132519672495-56a014558e80-1000--uefa-euro-2020-impresses-with-5-2-billion-cumulative-globa/
23. UEFA CHAMPIONS LEAGUE STATISTICS HANDBOOK 2022/23, https://editorial.uefa.com/resources/0282-18407ae-cf6fe-cb82de053b1e-1000/ucl_202223_all-time_md13.pdf
24. World Cup football tournament, https://www.britannica.com/sports/World-Cup-football
25. 2022 FIFA World Cup: Economic Impact on Qatar and Regional Spillovers, IMF report 2024, 13p., https://www.imf.org/-/media/Files/Publications/Selected-Issues-Papers/2024/English/SIPEA2024011.ashx
26. 2024 UEFA Champions League final: Wembley Stadium, https://www.uefa.com/uefachampionsleague/news/0278-15c59d96fb8d-876986ad6544-1000--where-is-the-2024-final/

Гаяне ТОВМАСЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук, доцент

РЫНКИ И КОНКУРЕНЦИЯ

ОТ ГОЛОВ К ТРОФЕЙНОМУ КУБКУ: КОРОЛЬ СПОРТА - ФУТБОЛ И ТУРИЗМ

Футбол считается королем спорта, у него около 3,5 миллиардов болельщиков по всему миру и 250 миллионов игроков в 200 странах мира. Объем мирового футбольного рынка в 2022 году оценивается в 4,04 миллиарда долларов США, а к 2031 году, по прогнозам, достигнет 5,65 миллиарда долларов США. Больше всего голов в истории футбола забили португалец Криштиану Роналду – 879 голов и аргентинец Лионель Месси – 832 гола.

В статье представлены основные футбольные события, привлекающие миллионы туристов: чемпионат мира по футболу, чемпионат Европы УЕФА, Лига чемпионов УЕФА, пять главных европейских лиг и др. В статье также представлены лучшие стадионы мира, привлекающие миллионы туристов. Даны некоторые рекомендации по развитию футбола и футбольного туризма в Армении.

Ключевые слова: *спорт, футбол, футбольный туризм, гол, стадион, турнир, кубок*

Gayane TOVMASYAN
Senior researcher at «Amberd» Research center, ASUE, PhD in Economics, Associate Professor

MARKETS AND COMPETITION

FROM GOALS TO TROPHY CUP: FOOTBALL AS THE KING OF SPORTS AND TOURISM

Football, considered the king of sport, has around 3.5 billion fans worldwide and 250 million players in 200 countries around the world. The global football market size was valued at USD 4.04 billion in 2022 and is projected to grow to USD 5.65 billion by 2031. In the sport's history, Portuguese Cristiano Ronaldo holds the record for the most goals scored, with 879, followed by Argentinian star Lionel Messi with 832.

The paper presents the main football events that attract millions of tourists: FIFA World Cup, UEFA European Championship, UEFA Champions League, and the five major European leagues. It also explores the best stadiums in the world, which attract millions of tourists. Finally, the paper provides recommendations for the development of football and football tourism in Armenia.

Keywords: *sport, football, football tourism, goal, stadium, tournament, cup*